



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 242 - Ա

04 սեպտեմբերի 2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 30 - Ի N 26 - Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «հրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997
թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի 1-ին պարբերության դրույթով
կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի հուլիսի
30-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության տարհանման
հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի
2011 թվականի հունվարի 27-ի N 6 - Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին»
N 26-Ա կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ կարգադրության
հավելված 1-ը՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության
տարհանման հանձնաժողովի կազմը, շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն
հավելվածի:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝



ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2017թ. սեպտեմբերի 4 - ի
N 242 - Ն կարգադրության


«Հավելված N 1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2013 թ. հուլիսի 30 - ի
N 26 - Ա կարգադրության

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ՏԱՐՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

- | | |
|----------------------------------|--|
| Հակոբյան Կարեն Աղեկյան Ալբերտ | - մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ - մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի նախագահի տեղակալ |
| Հարությունյան Վանիկ | - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, քարտուղար |
| Բաղայան Գարիկ | - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ |
| Պողոսյան Անուշ | - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ |
| Բաղդասարյան Արման | - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալի պաշտոնակատար |
| Բուդումյան Խաչատուր | - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ |
| Հակոբյան Տիգրան | - մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ |
| Կիրակոսյան Վազգեն | - ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետի տեղակալ ծառայության գծով /համաձայնությամբ/ |
| Խաչատրյան Սուրիկ | - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի վարիչ |
| Հողաբաշյան Վալեր | - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ |
| Մելքոնյան Գագիկ | - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ |
| Մարգարյան Վաղինակ | - «ՀԷՏ» ՓԲԸ «Գեղամա» մասնաձեռնարկի» գանցի ԱՏ և ՏՇ ավագ ճարտարապետի /համաձայնությամբ/»: |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝


ԿԱԶՄ ԽԼՂԱԹՅԱՆ